Дефект типа фершробен (эволюционирующая шизоидия по Н. Еу) был обнаружен в 1,1% случаев от всех дефицитарных резидуальных состояний, дефект по типу дефицитарной шизоидии в 38,2% случаев, дефект по типу снижения уровня личности (простой дефицит) был обнаружен в 29,4% случаев, дефект по типу псевдобрадифрении (астенический дефект, аутохтонная астения, редукция энергетического потенциала) в 25,5% случаев. В соответствии с интегративными вариантами дефекта среди больных с дефицитарным типом резидуального состояния в 2,9% случаев наблюдался дефект по типу

деформации структуры личности (сочетание дефекта типа фершробен с дефектом по типу снижения уровня личности), а в 2,9% случаев наблюдался дефект по типу падения психической активности (сочетание дефекта по типу дефицитарной шизоидии с дефектом по типу псевдобрадифренией).

Таким образом, в ходе настоящего исследования было обнаружено, что интеграция шизоидных (психопатоподобных) и псевдоорганических расстройств у больных с манифестными прогрессивными формами шизофрении наблюдалась не во всех случаях, как было описано В.Ю. Воробьевым [2], а только у определенной группы больных. Заключение автора были основаны на изучении психического дефекта больных шизофренией с преобладанием на всем протяжении заболевания негативных расстройств. Фактически исключались случаи с наличием в клинике болезни каких-либо продуктивных психопатологических расстройств, и исследовались больные с неманифестной и, главным образом мало-прогрессивной шизофренией. Между тем наличие в динамике болезни многочисленных, рецидивирующих продуктивных психопатологических расстройств, а также высокая прогрессивность шизофренического процесса, по-видимому, патопластически структурируют психический дефект.

Что касается степени выраженности психического дефекта у больных с дефицитарным типом резидуального состояния, то следует отметить, что легкий дефект (суб-общий счет негативной суб-шкалы был равен 11 баллам) наблюдался у 42 больных – $17,3\% \pm 2,4$, умеренный дефект (суб-общий счет негативной суб-шкалы был равен 28 баллам) наблюдался у 39 больных – $16,0\% \pm 2,3$, а глубокий дефект (суб-общий счет негативной суб-шкалы был равен 47 баллам) у 21 больного – $8,6\% \pm 1,8$.

Отдаленный исход в клиническое выздоровление ($12,8\% \pm 2,1$) отражал полноценно реализованную регрессивную тенденцию шизофренического процесса. Здесь наблюдалось полное регрессивное течение болезни после многолетних приступов-психозов, после стремительного прогрессивного движения процесса и последующего становления резидуальной шизофрении. На отдаленной, стабилизированной стадии шизофренического процесса у больных происходило постепенное полное обратное развитие как всех продуктивных психопатологических расстройств, так и полное обратное развитие имеющегося ранее у больных разного характера и разной степени выраженности психического дефекта.

Следует сразу отметить, что группа лиц с неблагоприятно протекающими манифестными формами шизофрении с исходом в клиническое выздоровление задолго до настоящего обследования (в среднем $2 \text{ года} \pm 1,7$) и на момент катамнеза не получали каких-либо психотропных средств.

Психическое состояние этой группы лиц на момент осмотра характеризовалось внутренней упорядоченностью, согласованностью и гармонией психических процессов, с отсутствием каких-либо признаков психической болезни. Однако с учетом того обстоятельства, что лица этой группы, несмотря на полное отсутствие признаков психической болезни, по разным семейно-бытовым, семейно-социальным причинам продолжали находиться в психиатрическом стационаре, мы потеряли возможность изучать их в более естественных социальных условиях, поэтому, по нашему мнению, правомерно было оценить их состояние как клиническое выздоровление, а не как выздоровление.

Психометрическое исследование психического состояния группы лиц с исходом в клиническое выздоровление выявило следующие показатели. По шкале позитивных и негативных синдромов шизофрении (PANSS) суб-общий счет позитивной суб-шкалы был равен 7 баллам, суб-общий счет негативной суб-шкалы был равен 7 баллам, суб-общий счет суб-шкалы общей психопатологии был равен 16 баллам, сумма баллов всех суб-шкал (общий счет) была равна 30 баллам.

Таким образом, в ходе исследования было обнаружено, что при неблагоприятно протекающих манифестных прогрессивных формах шизофрении могут формироваться различные типы исходов. В $9,5\% \pm 1,9$ случаев формировались психотические резидуальные состояния, в $35,8\% \pm 3,1$ случаев – резидуальные состояния с редуцированными позитивными расстройствами, в $42,0\% \pm 3,2$ случаев – дефицитарные резидуальные состояния, а в $12,8\% \pm 2,1$ случаев – клиническое выздоровление. Психотические резидуальные состояния определялись картинами, характерными для стадии стабилизации шизофренического процесса, однако признаков редукции процесса впоследствии не прослеживалось. Резидуальные состояния с редуцированными продуктивными расстройствами были следствием приостановки регрессивной динамики продуктивных психопатологических расстройств на стадии редукции болезненного процесса на неопределенно долгое время. Дефицитарные резидуальные состояния отражали максимально реализованную регрессивную динамику продуктивных психопатологических расстройств. Отдаленный исход в

клиническое выздоровление отражал полноценно реализованную регрессионную тенденцию самого шизофренического процесса.

Поступила 25.01.12

**Շիզոֆրենիայի մանիֆեստային պրոգրեդիենտ ձևերի ելքերի
կլինիկա-հոգեախտաբանական կառուցվածքը և
տիպաբանությունը**

Ա.Գ. Մկրտչյան

Կլինիկա-հոգեախտաբանական, կլինիկա-կատամնեստիկ և փսիխոմետրիկ մեթոդներով հետազոտվել են շիզոֆրենիայի մանիֆեստային պրոգրեդիենտ ձևերով տառապող 243 հոսպիտալացված քրոնիկական հիվանդ՝ հիվանդության հեռավոր շրջաններում: Ելքային վիճակների տիպերի տարբերակման ընթացքում պարզվեց, որ ռեզիդուալ վիճակների փսիխոտիկ տիպը հանդիպում է 9,5%, ռեզուկցված պոզիտիվ խանգարումներով տիպը՝ 35,8, դեֆիցիտար տիպը՝ 42,0, իսկ ելքային վիճակները՝ կլինիկական առողջացմամբ՝ 12,8% դեպքերում: Ռեզիդուալ վիճակների փսիխոտիկ տիպի ժամանակ նկարագրվում են հալյուցինատոր, հալյուցինատոր-պարանոիդ, հալյուցինատոր-պարաֆրեն, պարանոիդ և պարաֆրեն խանգարումներ: Ռեզուկցված պրոգրեդիենտ խանգարումներով ռեզիդուալ տիպի դեպքում նկատվում են ռեզուկցված խոսքային խանգարումներ, ռեզուկցված ցնորքային և զառանցանքային, ինչպես նաև մտածողության ռեզուկցված ֆորմալ խանգարումներ: Ռեզիդուալ վիճակների դեֆիցիտար տիպի ժամանակ նկատվում են փսիխոպարանոման (շիզոֆրենիկ կառուցվածքի դեֆեկտ), պսևդոթանական և համակցված դեֆեկտի տարբեր դրսևորումներ: Կլինիկական առողջացմամբ հեռավոր ելքը արտացոլում է հիվանդության հեռավոր փուլերում շիզոֆրենիկ պրոցեսի ամբողջական ռեալիզացված ռեգրեդիենտ միտումը:

**Clinical psychopathological structure and typology of the outcomes of
manifested progredient forms of schizophrenia**

A.G. Mkrtchyan

The study applied clinical-psychopathological, clinical-cathamnestic and psychometric testing approaches to examine 243 institutionalized chronic patients with manifested progredient forms of schizophrenia in residual phase of the disease.

While differentiating the forms of the outcomes, the study found psychotic form of residual condition in 9.5%, the form with reduced positive symptoms in 35.8%, deficit form in 42.0% and outcome in the form of clinical recovery in 12.8% of the investigated cases.

Hallucinatory, hallucinatory paranoid, hallucinatory paraphrenic, paranoid and paraphrenic disorders were observed among the cases with psychotic form of residual condition. Reduced speech disorders, hallucinations and delusions as well as reduced formal disorder of the thoughts were observed among the cases with residual condition in the form of reduced positive disorders. The study observed different types of deficit similar to psychopathy (deficit of schizoid structure), pseudo-organic and combined deficits among the patients with deficit form of residual condition. The form of clinical recovery of residual phase was presented with the fully expressed regredient course of the schizophrenia in the residual phase of the disease.

Литература

1. *Амбрумова А.Г.* Течение шизофрении по данным отдаленного катамнеза. М., 1962.
2. *Воробьев В.Ю.* Шизофренический дефект (на модели шизофрении, протекающей с преобладанием негативных расстройств). Автореф. дис. ... докт. мед. наук. М., 1988.
3. *Вроно М.С.* Конечные состояния шизофрении с речевой бессвязностью. Автореф. дис. ... канд. мед. наук. М., 1956.
4. *Ганноха Ю.Н.* О шизофреническом дефекте и его динамике. Цит. по Юдину. Шизофрения как первичный дефект-психоз. Труды ЦИП МЗ РСФСР. М., 1941, т. 2, с. 48-56.
5. *Дворин Д.В.* Клиника непрерывно протекающей параноидной шизофрении в свете отдаленных катамнезов в старости. Дис.... канд. мед. наук, М., 1978.
6. *Дружинина Т.А., Концевой В.А., Медведев А.В., Молчанова Е.К.* Значение метода длительного катамнеза для понимания некоторых аспектов проблемы эндогенных психозов. Седьмой Всесоюзный съезд невропатологов и психиатров. Тез. докл. 26-30 мая 1981, т. 1, М., 1981, с. 41-43.
7. *Жариков Н.М.* Клиника ремиссий шизофрении в отдаленном периоде заболевания. Автореф. дис. ... докт. мед. наук. М., 1961.
8. *Зеневич Г.В.* Ремиссии при шизофрении. Л., 1964.
9. *Левит В.Г.* Материалы к катамнезу простой формы шизофрении. Журн. невропатол. и психиатр., 1965, 1, с. 88-89.
10. *Левит В.Г.* О конечных состояниях при простой шизофрении. Журн. невропатол. и психиатр., 1969, 12, с. 1848-1852.

11. *Медведев А.В.* О состоянии глубокого дефекта на отдаленных стадиях неблагоприятно протекающей шизофрении. Журн. невропатол. и психиатр., 1984, 5, с. 712-719.
12. *Мелехов Д.Е.* Клинические основы прогноза трудоспособности при шизофрении. М., 1963.
13. *Морозов В.С., Тарасов Ю.К.* Некоторые типы спонтанных ремиссий при шизофрении. Журн. невропатол. и психиатр., 1951, т. 20, 4, с. 44.
14. *Новиков В.Н.* О некоторых вариантах стабилизации процесса на отдаленных этапах злокачественной шизофрении. Журн. невропатол. и психиатр., 1981, 5, с. 720-725.
15. *Фаворина В.Н.* К вопросу о поздних ремиссиях при шизофрении. Сообщ. V. Журн. невропатол. и психиатр., 1965, 1, с. 81-87.
16. *Цуцульковская М.Я., Абрамова Л.И.* Разновидности течения и критерии прогноза при параноидной шизофрении, начавшейся в подростковом и юношеском возрасте по данным отдаленного катамнеза. Журн. невропатол. и психиатр., 1981, 1., с. 89-98.
17. *Цуцульковская М.Я., Абрамова Л.И., Шахматова И.В., Шапиро Ю.А., Элиава В.Н.* Конечные состояния юношеской злокачественной шизофрении (клинико-патогенетические корреляции). Журн. невропатол. и психиатр., 1982, 7, с. 117-126.
18. *Штернберг Э.Я., Дружинина Т.А., Концевой В.А., Молчанова Е. К.* Закономерности клинических проявлений и течения шизофрении в свете отдаленных катамнезов в старости. В кн.: Мат. 6-го Всесоюзного съезда невропатологов и психиатров. М., 1975, т. 3, с. 144-148.
19. *Эдельштейн А.О.* Исходные состояния шизофрении. М., 1938.
20. *Kraepelin E.* Psychiatrie, 1913, Bd. 3, S. 871.
21. *Leonhard K.* Die defektschizophrenen Krankheitsbilder. Leipzig, 1936.
22. *Mayer-Gross W.* Über die Stellungnahme zur abgelaufenen akuten Psychoche. Z. Neur. Psych., 1920, 60, S. 231-253.
23. *Schneider C.* Die Psychologie der Schizophrenen. 1930, S. 301.

Բուսական ծագման պոլիսախարիդները և նրանց կիրառման հեռանկարները

Ն. Բ. Չիչոյան

Մ. Հերացու անվ. ԵՊԲՀ ֆարմակոգնոզիայի ամբիոն
0025, Կորյունի փ., 2


*Բանալի բառեր՝ բուսական ծագման պոլիսախարիդ, դեղաբուսական
հումք*

Վերջին տարիներին գիտական հանրությունը իր ուշադրությունն է բևեռել բուսական ծագման պոլիսախարիդների (ԲՊ) ուսումնասիրության վրա: Եթե նախկինում տարբեր դեղաձևերի արտադրության մեջ պոլիսախարիդները հիմնականում կիրառում էին որպես օժանդակ նյութեր, ապա վերջին շրջանում նրանց հիմնականում դիտարկում են որպես կենսաբանորեն ակտիվ նյութեր:

Այսօր հայկական դեղագործական շուկայում պոլիսախարիդներ պարունակող ֆարմակոպեական դեղաբուսական հումքը (ԴԲՀ) ներկայացնում են տուղտի արմատները (*Radix Althaeae*) ջղախոտ մեծի տերևները (*folia Plantaginis majoris*), տատրակի տերևները (*folia Farfarae*), կտավատի սերմերը (*Semina Lini*), կատվալեզվի խոտը (*Herba Bidentis tripartitae*), որոնք կիրառվում են ոչ միայն դեղորայքային նպատակներով, այլև՝ մտնում են սննդային կենսաբանական ակտիվ հավելումների մեջ:


ՀՀ գրանցված դեղորայքային և բժշկական խարգելիչ միջոցների (որոնց ազդող նյութերն են հանդիսանում պոլիսախարիդները) 18%-ը բաժին է ընկնում ԴԲՀ-ին, 37%-ը՝ դեղապատրաստուկներին, 45%-ը՝ սննդային կենսաբանորեն ակտիվ հավելումներին (նկ.1):

դեղապատրաստուկներ
դեղաբուսական հումք
սննդային ակտիվ հավելանյութեր (ՄԱՀ)



Նկ. 1. Հայաստանում գրանցված պոլիսախարիդներ պարունակող դեղորայքային և բժշկական խարգելիչ միջոցների քանակական ցուցանիշները

Ինչպես ցույց է տալիս ԴԲՀ-ի համար գործող նորմատիվ փաստաթղթերի վերլուծությունը [8], ըստ պոլիսախարիդների պարունակության ԴԲՀ-ը պայմանականորեն կարելի է բաժանել 3 ենթախմբերի. ցածր պարունակության մինչև 8%, միջին պարունակության՝ 5-20%, բարձր պարունակության՝ 20%-ից ավելի: Առաջին ենթախմբին են վերագրվում հանրապետությունում գրանցված ԴԲՀ-ի 64%-ը, երկրորդ ենթախմբին՝ 24%, երրորդ խմբին՝ 12%-ը (նկ.2):



Նկ. 2. Հայաստանում գրանցված ԴԲՀ-ի՝ ըստ պոլիսախարիդների պարունակության քանակական ցուցանիշները

Պոլիսախարիդները հանդիսանում են բարձրամոլեկուլյար ածխաջրեր, որոնց կազմի մեջ մտնում են ամենատարբեր մոնոսախարիդները (նաև օլիգոսախարիդները)՝ տարբեր հարաբերությամբ և քանակությամբ: Ի տարբերություն մոնոսախարիդների և օլիգոսախարիդների, նրանցից ոմանք չեն լուծվում ջրում (բջջանյութ), մյուսները միայն ուռչում են (օսլա), իսկ երրորդները՝ միջանկյալ դիրք են զբաղեցնում իսկական և կոլլոիդ լուծույթների միջև (լորձեր, պեկտիններ և այլն) [10]:

ԲՊ, որոնց շարքին են դասվում օսլան, կամեդները, լորձերը, պեկտինային նյութերը, բջջանյութը, ինուլինը, սպիտակուցների և ճարպերի հետ մեկտեղ անհրաժեշտ են բուսական և կենդանական օրգանիզմների կենսագործունեության համար:

ԲՊ կազմի, հատկությունների և կառուցվածքի ուսումնասիրության նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է նրանով, որ նրանք դրսևորում են արտահայտված ֆիզիոլոգիական ակտիվություն. ցուցաբերում են հակաբորբոքային, հակահիպոքսիկ, իմունոտրոպ, հակաուռուցքային, հակամիկրոբային, հակաաթերոսկլերոտիկ և այլ հատկություններ:

Այսօր գնալով մեծանում է հետաքրքրությունը հիմնականում դեղաբուսական հումքերի նկատմամբ այն պարզ պատճառով, որ հանդիսանալով քիմիական ակտիվ նյութերի համալիր՝ ցուցաբերում են բազմակողմանի կենսաբանական ակտիվություն:

Կոատուկի (*Arctium tomentosum* M.), տատրակի (*Tussilago farfara* L.) և տարկավանի (*Tanacetum vulgare* L.) հումքերից անջատված պոլիսախարիդների ուսումնասիրությունը պայմանավորված է բժշկության մեջ վերոհիշյալ բույսերի լայն կիրառմամբ և նրանց քիմիական

կառուցվածքի և ֆիզիոլոգիական ակտիվության սահմանափակ հետազոտմամբ: Մասնավորապես, կոատուկի և տատրակի արմատների, տարկավանի ծաղիկների օդային չոր հումքերի հանուկներից անջատված պոլիսախարիդների հիդրոլիզատում հայտնաբերվեցին L-ռամնոզա, L-արաբինոզա, D-գալակտոզա և մեծ քանակությամբ գլյուկուրոնաթթու, որոնք անջատված պոլիսախարիդներին վերագրեցին պեկտինային նյութերի շարքին կամ թթվային արաբինոզալակտանների: Միաժամանակ, նշված պոլիսախարիդների ֆիզիոլոգիական ակտիվության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նրանք ընդունակ են կապելու արյան շիճուկի ցածր խտության աթերոզեն լիպոպրոտեիդներին՝ դրսևորելով հակաաթերոսկլերոտիկ ակտիվություն [12]:

Առավել ուշագրավ են այսպես կոչված պոլիֆրուկտանները (ՊՖ), որոնք սախարոզայի մոլեկուլից գոյացող ածխաջրատային պոլիմերներ են: Բնական ծագման պոլիսախարիդների այս խումբը արտադրում է բուսատեսակների ավելի քան 15%-ը: Ավելի հաճախ ՊՖ հանդիպում են գնարբուկազգիների (*Polemoniaceae*), շուշանազգիների (*Liliaceae*), աստղածաղիկազգիների (*Asteraceae*) ընտանիքների ներկայացուցիչների մոտ: Հետաքրքրական են ինուլինի խմբի ՊՖ, որոնք ներկայումս լայնորեն կիրառվում են մի շարք կենսաբանորեն ակտիվ հավելանյութերի արտադրության մեջ և դրականորեն են ազդում նյութափոխանակության, լյարդում՝ ածխաջրատային փոխանակության վրա, կայունացնում են արյան մեջ գլյուկոզայի մակարդակը և դրա հետ կապված՝ մասնակիորեն փոխարինում հակադիաբետիկ պատրաստուկներին: Ինուլինը նպաստում է օրգանիզմից ծանր մետաղների հեռացմանը, կալցիումի և երկաթի յուրացմանը, ինչպես և՛ ենթաստամոքսային գեղձի աշխատանքի ակտիվացմանը: Կան տեղեկություններ ինուլինի պրոբիոտիկ և իմունամոդուլացնող հատկությունների վերաբերյալ [11]:

Հատուկ ուշադրության է արժանանում ինուլինի սկզբնաղբյուր հանդիսացող գետնատանձ կոչվող բազմամյա բույսի վերգետնյա մասը, որն իր բացառիկ կենսաքիմիական կազմով և վերգետնյա մեծ կենսազանգվածով դառնում է հանրահայտ հումքային կուլտուրաներից մեկը: Նրա արժեքավոր հատկություններից մեկն է հանդիսանում ոչ միայն ցրտակայունությունը և էկոլոգիական մաքրությունը, այլ նաև՝ սնուցման համար դիետիկ նշանակությունը: Ներկայումս, արտերկրում հետազոտություններ են իրականացվում գետնատանձից բուժիչ պատրաստուկների, սննդային դիետիկ արգասիքների, տեխնիկական և կերային նպատակներով արգասիքների ստացման տեխնոլոգիաների մշակման ուղղությամբ: Կիրառման այս հնարավորություն-

ները բացատրվում են գետնատանձի պալարներում և վերգետնյա մասում պոլիսախարիդների պարունակությամբ, որոնց կուտակման քանակական աճ (33-ից մինչև 52%) է գրանցվում հունիսից հոկտեմբեր ամիսներին [2,7]:

ԲՊ կազմի, հատկությունների և կառուցվածքի ուսումնասիրության նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է նրանով, որ նրանցից ոմանք դրսևորում են արտահայտված ֆիզիոլոգիական ակտիվություն. ազդում են էնդոկրին և իմունային համակարգերի վրա, դրսևորում են գաստրոպրոտեկտիվ և հիպոլիպիդեմիկ ակտիվություն:

Այսպես՝ մասթենինների պտուղներից պոլիսախարիդների անջատումը և նրանց քիմիական ընդհանուր վերլուծությունը հիմք են տալիս ենթադրելու մասթենինների ոչ միայն վիտամինային հումքի աղբյուր ծառայելու, այլ նաև, դեռևս չբացահայտված կենսաբանական ակտիվությունների մասին: Հայտնի է, որ մասթենու պտուղները լայնորեն կիրառվում են բժշկության և սննդի արդյունաբերության մեջ: Պարունակում են վիտամին C, B₁, B₂, K₁, ֆոլաթթու, կարոտինոիդներ, P վիտամինային ակտիվությամբ օժտված ֆլավոնոիդներ, սակայն մասթենինների պտուղների պոլիսախարիդների կազմը և հատկությունները լիարժեք ուսումնասիրված չեն, որը, հավանաբար, պայմանավորված է նրանով, որ նրանց վերամշակման հիմնական արգասիքները հանդիսանում են կոմպլեքսային պատրաստուկներ՝ ջրաթուրմեր, հանուկներ, օշարակներ և այլն: Մասթենինների որոշ տեսակների (*Rosa rugosa*) պտղամսից ջրով և ամոնիումի օքսալատի 0.7% լուծույթով էքստրահման արդյունքում անջատված պեկտինային պոլիսախարիդների 3 ֆրակցիաները բնորոշվեցին գալակտուրոնաթթվի բարձր պարունակությամբ (մինչև 69%): Այս ջրալույծ պոլիսախարիդների (ռոզոլինաններ) անջատումը և քիմիական հետազոտումը ցույց տվեցին, որ նրանք մտնում են տվյալ բույսի պեկտինային նյութերի կազմի մեջ և չեն հանդիսանում թունավոր միացություններ: Արյան շիճուկում նրանք դրսևորում են հիպոլիպիդեմիկ ակտիվություն և ազդում են պերիտոնային մակրոֆագերի ադգեզիվ հատկությունների վրա [5]:

Ըստ որոշ հետազոտողների՝ այնպիսի պոլիսախարիդներ, ինչպիսիք են պեկտինային նյութերը, որպես բուսական պոլիսախարիդների տիպիկ ներկայացուցիչներ, լայնորեն կիրառվում են բժշկական պրակտիկայում՝ արնեկանգ պատրաստուկների, սորբենտների պատրաստման, օրգանիզմից ծանր մետաղների (կապար, կոբալտ, պղինձ) հեռացման, սալիցիլատների թունայնության նվազեցման, հակախոցային, մեղմ լուծողական և այլ ազդեցությունների դրսևորման նպատակներով:

Ուստի, պեկտիններ պարունակող արգասիքները հատկապես ցուցված են մարդկանց, որոնք ապրում են ռադիոակտիվ վարակվածության միջավայրում: Շաքարային դիաբետի ժամանակ որոշ հեղինակներ նպատակահարմար են համարում պեկտինի համատեղումը ինուլինի հետ, քանի որ պեկտինը նպաստում է ածխաջրատային փոխանակության կանոնավորմանը: Վերջինս կարելի է հիմնավորել գետնատանձի պալարների օրինակով, քանի որ դրանք պարունակում են ինուլին և պեկտին, որոնք հեռանկարային են դարձնում հումքի կիրառումը հակադիաբետիկ բժշկական խարգելիչ պատրաստուկների արտադրության մեջ [7]:

Քիչ չեն կենսաբանորեն ակտիվ պոլիսախարիդների նոր հումքային աղբյուրների հայտնաբերման և հետազոտման ուղղությամբ կատարվող գիտահետազոտական աշխատանքները: Մասնավորապես, հետաքրքրություն են առաջացնում այն բազմամյա խոտաբույսերը, որոնք դարեր շարունակ կիրառություն են գտել ժողովրդական բժշկության մեջ: Որպես այդպիսին, ուշադրության են արժանանում մանուշակների որոշ տեսակներ (*Viola mirabilis* L.), որոնք դեռևս վաղ անցյալից կիրառվում են որպես խորխաբեր և հակաբորբոքային միջոց: Մանուշակների խոտի օդային չոր հումքից անջատվել են ջրալույծ պոլիսախարիդներ, պեկտինային նյութեր և հեմիցելյուլոզաներ, որոնց բարձր պարունակությունը հումքում վկայում է նրանց՝ որպես պոլիսախարիդային հումքի կիրառման հեռանկարների մասին [1]:

Ներկայումս ակտիվորեն ուսումնասիրվում է ԲՊ ֆիզիոլոգիական ակտիվությունը կենդանի բջիջների հանդեպ: Այս իմաստով հետազոտվել է բուսական 28 պոլիսախարիդների ազդեցությունը լոլիկի (*Lycopersicon esculentum*) և վարունգի (*Cucumis sativus*) սերմերի աճման արագության վրա: Եվ ինչպես ցույց տվեցին հետազոտության արդյունքները, որոշ բույսերից անջատված պոլիսախարիդները (օրինակ՝ սիբիրյան եղևնու ասեղնատերևներից անջատված) խթանում են վերոհիշյալ սերմերի աճման արագությունը [3]:

Մի շարք հետազոտությունների համաձայն, արոսենի սովորականի պտուղներից էքստրահված պեկտինային պոլիսախարիդների ջրային լուծույթները ցուցաբերում են հակաօքսիդանտային ակտիվություն [6]:

Հետազոտվել է նաև էկզոգեն պեկտինային պոլիսախարիդների ազդեցությունը սերմերի, արմատների աճի, ցորեն փափուկի (*Triticum aestivum* L.), գարի ցանովի (*Secale cereale* L.) ծլունակության վրա: Պարզվել է, որ էկզոգեն պեկտինները խթանում են սերմերի ծլունակությունը, արմատների աճը: Վերջինս պայմանավորված է պեկտի-

նային պոլիսախարիդների կառուցվածքային առանձնահատկություններով [4]:

Այսօր միանգամայն արդիական են դարձել էլեկտրոնամանրադիտակային մեթոդով բնական պոլիսախարիդների ենթամոլեկուլային կառուցվածքների ուսումնասիրությունները: Հաստատվել են ենթամոլեկուլային կառուցվածքների՝ այսպես կոչված բյուրեղիկների չափսերի, ձևի և համասեռության ազդեցությունները պոլիսախարիդների ֆիզիկամեխանիկական և ֆիզիկաքիմիական հատկությունների վրա:

Գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ պոլիսախարիդներից անջատված նանոմասնիկները օժտված են շատ հատկություններով: Մասնավորապես, այդպիսի նանոկոմպոզիցիաները կարող են հաջողությամբ կիրառվել որպես կենսաբանորեն ակտիվ տարբեր նյութերի և ֆերմենտների կրող, և որպես սննդային և կոսմետիկ նշանակության հեռանկարային բաղադրամասեր [13]:

Բազմաթիվ փորձագիտական տվյալները հաստատում են այն միտքը, որ դիետիկ բջջանյութի սահմանափակ կիրառումը (օրական նորման 25-30գ) արևմտյան երկրներում հանգեցնում է այնպիսի հիվանդությունների առաջացմանը, ինչպիսիք են հաստ աղիներում չարորակ նորագոյացությունները, սրտի կորոնար հիվանդությունը, շաքարախտը, ճարպակալումը, հիպերտոնիան և այլն:

Վերը նշված առանց օսլայի պոլիսախարիդները և խառը տիպի կապերով պոլիսախարիդները՝ հեմիցելյուլոզները, պեկտինները ներկայումս հավաքագրվում են “դիետիկ բջջանյութ” անվան տակ: Այս անվանացանկը համալրում են նաև որոշ ծառատեսակների արտահոսող արգասիքները՝ կամեդների (*Gummi*) պոլիսախարիդները: Օրինակ, արաբական ակացիայի կամեդը (գումիարաբիկ), որը ջրում ամբողջությամբ լուծվող պոլիսախարիդ է և մարդու մարսողական ֆերմենտների ազդեցությունից հիդրոլիզի չի ենթարկվում, ապահովում է մարդու օրգանիզմի բջջանյութի պահանջի 80%-ը: Պատահական չէ այսօր գումիարաբիկի կիրառման հնարավորությունների ընդարձակումը սննդի և ըմպելիքների (գինիներ, գարեջուր, մրգային կոկտեյլներ) արտադրության մեջ [12]:

Վերջին ժամանակաշրջանում ակտիվացել են գիտական փնտրտուքները՝ բնական ծագման նյութերի ուղղությամբ, որոնք ազդում են օրգանիզմի իմունային համակարգի վրա: Շատ գիտնականներ բույսերի և նրանց պատրաստուկների ինունամոդուլացնող հատկությունները կապում են պոլիսախարիդների հետ:

Այդ պոլիսախարիդների շարքին են դասվում ջրալույծ արաբիկոգալակտանները, որոնք զգալիորեն պարունակվում են բուսական հումքերում: Ըստ Ասպինալի՝ արաբիկոգալակտանները բաժանվում

են 2 խմբի՝ արաբինո-4 գալակտաններ (I տիպ) և արաբինո-3,6-գալակտաններ (II տիպի/։ Առավել տարածված են II տիպի արաբինո-գալակտանները, որոնք ունեն էական գործնական նշանակություն։ Վերջիններս կազմում են ծածկասերմ և մերկասերմ որոշ բույսերի կամեդների հիմքը։ Օրինակ՝ ակացիայի կամեդի (*gummi Acaciae*) և խեժափիճու (*Larix mill*) կենսազանգվածի զգալի մասն են կազմում արաբինո-3,6-գալակտանները։ Խեժափիճու որոշ տեսակների բնափայտը պարունակում է մինչև 35 % արաբինոգալակտան, իսկ ակացիայի 1 ծառը կարող է տարեկան արտադրել մոտ 2կգ կամեդ [14]։

Ինչպես փաստում են որոշ հետազոտողների աշխատանքներ, խեժափիճի սիբիրյանի (*Larix sibirica Mill*) մեջ պարունակվող արաբինոգալակտանը խթանում է բջջային և հումորալ իմունիտետը [9]։

Ինչպես ցույց են տալիս բուսական ծագման որոշ արգասիքների ֆիթոքիմիական հետազոտության արդյունքները, Հայաստանի տարբեր շրջաններում աճեցվող ծիրանենիներից հավաքված կամեդների ջրային լուծույթներում պարունակվում է ջրալուծ արաբինոգալակտան, որը կարող է հեռանկարային դարձնել հայրենական ծիրանենիների կամեդների կիրառումը բժշկության տարբեր ոլորտներում [14]։

Վերջին ժամանակներս բուսական ծագման պոլիսախարիդները լայն կիրառում են գտել նաև արդյունաբերության մի շարք ոլորտներում՝ մասնավորապես, տեխնիկայում՝ իրենց էմուլգացնող, կայունացնող և կապակցող հատկությունների շնորհիվ [15]։

Այսպիսով, ֆիտոպոլիսախարիդները, որոնք լայնորեն տարածված են բուսական աշխարհում, կիրառման տեսակետից չափազանց մեծ հետաքրքրություն են ներկայացնում ժամանակակից բժշկադեղագիտական աշխարհում, արդյունաբերության այլ ոլորտներում և պահանջում են պոլիսախարիդային հումքերի նորանոր աղբյուրների խորը և համակողմանի վերլուծություն։

Ամփոփելով գրական աղբյուրների և սեփական հետազոտության արդյունքների վերլուծությունը, կարելի է փաստել պոլիսախարիդների քիմիական կառուցվածքադեղաբանական ակտիվություն կապի ուսումնասիրման արդյունավետության մասին, որը կարող է խոստանալ բուսական պոլիսախարիդների կիրառման նոր հեռանկարներ։

Поступила 29.11.11

Растительные полисахариды и перспективы их использования

Н.Б.Чичоян

В настоящее время интерес к растительным полисахаридам существенно возрос, в частности, многочисленными исследованиями было установлено наличие у полисахаридов выраженных антигипоксического отхаркивающего, противовоспалительного, гиполипидемического, противоопухолевого эффектов. Литературный анализ и результаты исследований свидетельствуют о том, что лекарственное растительное сырье, содержащее полисахариды, может использоваться не только в качестве вспомогательных, но и в качестве лечебно-профилактических средств, а также биологически активных добавок к пище.

Herbal polysaccharides and the perspectives of their medicinal use

N. B. Chichoyan

Nowadays the interest to herbal polysaccharides has considerably increased, especially due to the results of several researches showing that polysaccharides possess antihypoxic, expectorant, antiinflammatory, hypolipidemic, antineoplastic effects.

The results of the analysis and researches testify that polysaccharides containing herbal raw materials can be used not only as adjunctive but also as treating and preventing remedies as well as biologically active supplements.

Գրականություն

1. Бубенчиков Р. А., Дроздова И. Л. Новые растительные источники биологически активных полисахаридов, Фармация, 2005, 4, с.16.
2. Дорофеева Л. А., Ким Н. Ю., Рязанова Т. В., Чупрова Н. А. Исследование вегетативной части топинамбура. Оптимизация процесса получения экстрактов из вегетативной части топинамбура, Химия растительного сырья. 1998, 2. с. 53-57.
3. Елькина Е.А., Шубаков А.А. Влияние растительных полисахаридов на скорость прорастания семян *Lycopersicon esculentum* и *M. Cucumis sativus* L., Химия растительного сырья, 2002, 2, с.105 --109.
4. Елькина Е.А., Шубаков А.А., Оводов Ю.С. Влияние пектинов на рост злаковых культур, Химия растительного сырья, 2005, 4, с. 53-56.
5. Злобин А. А., Оводова Р. Г, Попов С. В. Общая химическая характеристика водорастворимых полисахаридов плодов шиповника морщинистого *Rosa Rugosa*, Химия растительного сырья, 2003, 2. с. 39-44.
6. Злобин А. А., Мартинсон Е. А., Литвинец С. Г. Пектиновые полисахариды рябины обыкновенной *Sorbus aucuparia* L, Химия растительного сырья, 2011, 1, с. 39-44.
7. Яблицева Н. С. Изучение полисахаридов клубней топинамбура и создание на их основе лечебно-профилактических средств. Автореф. дис... канд. фарм. наук. Пятигорск, 1998, с. 24.
8. Криштанова Н.А., Сафонова М.Ю. и др. Перспективы использования растительных полисахаридов в качестве лечебных и лечебно-профилактических средств. Фармация, 2005, 1, с. 212-221.
9. Медведева С. А., Александрова Г. П., Сайботалов М. Ю., Баженов Б. Н. Арабиногалактан лиственницы сибирской – природный иммуномодулятор. Актуальные проблемы создания новых лекарственных препаратов природного происхождения. СПб., 2001, с. 104-106.
10. Муравьева Д. А, Фармакогнозия М., 1991, с.89.

11. *Оленников Д. Н., Тамхаева Л. М.* Исследование колориметрической реакции инулина с резорцином в зависимости от условий ее проведения, *Химия растительного сырья*, 2008, 1, с. 87-93.
12. *Полле А. Я., Оводова Р. Г., Попов С. В.* Выделение и общая характеристика полисахаридов пижмы обыкновенной, мать-и-мачехи и лопуха войлочного, *Химия растительного сырья*, 1999, 1, с. 33-38.
13. *Фазилова С.А., Югай С.М., Рашидова С.Ш.* Структурные исследования полисахаридов и наноконпозиций на их основе. *Химия растительного сырья*, 2010, 1, с. 13-19.
14. *Чичоян Н. Б.* Gummi Armeniaceae из абрикосовых деревьев, произрастающих в Армении – перспективный источник арабиногалактана. *Georgian medical news*, 2011, 3 (192).
15. *Чичоян Н. Б.* Natural raw material resources of apricot gums of Republic Armenia and perspectives of their use. *Актуальные проблемы ботаники в Армении. Мат. международной конференции. Институт ботаники НАН РА*, 2008, с. 307-310.

Դեռահասի սոցիալիզացիայի գործընթացում ռիսկային վարքագծի գնահատման առանձնահատկությունները

Գ.Ռ. Սարգսյան, Ա.Կ. Հայրապետյան

*Մ. Հերացու անվան ԵՊԲՀ առողջապահության
կազմակերպման և բժշկական իրավունքի ամբիոն
0025, Երևան, Կոմյունի փ., 2*

Բանալի բառեր. դեռահաս, ռիսկային վարքագիծ, ռիսկային սեռական վարքագիծ, վերարտադրողական առողջություն, դեռահասի սոցիալիզացիա, ադապտացիա

Ռիսկային վարքագիծ հասկացության տակ կարելի է հասկանալ մեր գործողությունների լայն շրջանակը, ինչը մենք կատարում ենք ամեն օր: Մինչև անգամ երբ ջուր ենք խմում, կա ռիսկ որևէ վարակով հիվանդանալու, եթե ջուրը աղտոտված է ախտածին մանրէներով: Կանխարգելիչ գործունեության խնդիրը կայանում է այնպիսի ռիսկի կանխումը, որը մարդիկ ստեղծում են իրենց արարքներով և վարքով: Այդ պատճառով կանխարգելման ժամանակ օգտագործվում է *բարձր ռիսկային վարքագիծ* հասկացությունը, որը կարող է բերել առողջության և սոցիալական բարեկեցության կորստի, հոգեկան կամ ֆիզիկական կախվածության, վարակման, բռնության, սուիցիդների: Հենց ռիսկի աստիճանը և նրա մակարդակը որոշելու ունակությունն է թույլ տալիս մարդուն հավասարակշռված և ճիշտ որոշում կայացնել:

Գոյություն ունեն բազմաթիվ տեսություններ, որոնք բացատրում են մարդկանց վարքի ծագումը և փորձում են պատասխանել այն հարցին, թե ինչով է որոշվում մարդկանց վարքը, ինչպիսի գործոններ են ազդում տարբեր իրադրություններում հմտությունների ձևավորման համար, կարելի է արդյոք փոխել վարքի մոդելները, ինչպե՞ս ձևավորել անվտանգ վարքի հմտություններ և ինչպե՞ս կանխարգելել դեռահասների և երիտասարդների բարձր ռիսկային վարքագիծը: Արդյունքում գիտնականները եկել են եզրակացության, որ մարդու վարքի ձևավորման վրա ազդում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնները: Գիտնականների մի մասը վարքի ձևավորման համար գլխավորը համարում են ներքին գործոնները՝ խառնվածքը, բնավորությունը, կարողությունները, հետաքրքրությունները, իսկ մյուս

մասը՝ արտաքին գործոնները՝ ծննդավայրը, դաստիարակությունը ընտանիքում, կրթությունը, շրջապատը:

N.E. Miller-ի և J. Dollard-ի “Խթան-ռեակցիա” տեսությունը, ըստ որի մարդու վարքը համարվում է պատասխան ռեակցիա արտաքին միջավայրի խթաններին, վարքերի նմանությունը բացատրում է արտաքին միջավայրերի նմանությամբ: Մարդը իրեն պահում է այնպես, ինչպես իրեն սովորեցրել են, և նրա կատարած բոլոր գործողությունները կարելի է դիտել որպես “խթան-ռեակցիայի” հետևանք: Այսպիսի մոտեցմանը դեմ են գիտնականները, ովքեր մարդու վարքը համարում են ներքին գործոնների պատճառով առաջացած հմտություններ: Համաձայն Ֆրեյդի փսիխոդինամիկ, Ռոջերսի ֆենոմենալ տեսությունների որոշակի վարքի պատճառը մի շարք ներքին մեխանիզմներ են՝ բնագոյները, բնավորության գծերը, խառնվածքը, պաշտպանական մեխանիզմները, անհատի ի ծնե ունակությունները, մտածելակերպը և այլն [6,8]:

Էմորի համալսարանին կից բժշկական դպրոցի ամերիկացի գիտնականները հետազոտությունների արդյունքում եզրահանգել են հետևյալին՝ վտանգավոր վարք հաճախ դիտվում է այն դեռահասների մոտ, ում գլխուղեղի սպիտակ նյութը եղել է ավելի կազմակերպված և հասուն: Սակայն թե որն է պատճառը և որը հետևանք, դեռ պարզաբանված չէ: Պրոֆեսոր Gregory Berns-ի կարծիքով հետազոտությունները խիստ կարևոր են որոշելու համար թե դեռահասի գլխուղեղի վաղ զարգացումն է նրանց վտանգավոր վարքի պատճառ, թե նրանց վտանգավոր վարքն է բերում գլխուղեղի սպիտակ նյութի զարգացման[12]:

С.Ю. Головин-ի “Գործնական հոգեբանի բառարան” գրքում ռիսկը դիտվում է որպես գործողության սխտուատիվ բնութագիր, որտեղ ուշադրության կենտրոնում է անորոշության կատեգորիան [6]: Ընդ որում, ըստ У. Бек-ի, հենց անորոշությունը և կյանքի անկանխատեսելիությունն են ճիշտ բնութագրում ժամանակակից ռիսկի ամբողջությունը [3]: Այսպիսով ռիսկը համարվում է անհատի և հասարակության կենսագործունեության կարևոր բաղադրիչը: Ստացվում է, որ ռիսկային վարքագծի իրականացումը նպաստում է դեռահասին դրական կամ բացասական փորձի ձեռքբերմանը ժամանակակից անորոշ դրություններում: Դրա համար կարևոր է դիֆերենցված մոտեցումը նրանց ռիսկային վարքի գնահատմանը: Այսպես, մինչև 15-16 տարեկան դեռահասները ռիսկի ֆակտորը գնահատում են բացարձակ դրական ինքնաճանաչման և ինքնահաստատման պրոցեսում, մինչդեռ 15-16 տարին լրացած դեռահասները ռիսկը դիտում են որպես կյանքի և առողջության վտանգի աղբյուր: Արդյունքում, չնայած բոլոր

արգելքներին և քննադատություններին դեռահասը շարունակում է ռիսկային գործունեությունը ապացուցելու համար իր անհատականությունը և յուրօրինակությունը: Արդյոք հնարավոր է անհատի կյանքից բացարձակ հանել այն, ինչ ա) իր կողմից գնահատվում է դրական, բ) կապված է նրա հետաքրքրությունների և պահանջների հետ, դ) համաձայնեցվում է ժամանակակից հասարակության իդեալների, նպատակների, սկզբունքների հետ:

Հետաքրքիր է Schwartz Shalom-ի վերաբերմունքը հանդեպ ռիսկի ֆենոմենը: Գիտնականը առաջարկում է այսպիսի մոտեցում՝ ռիսկի ֆենոմենը դիտվում է որպես “ռիսկ-նորույթ”՝ անհատի մտքերի և զգացմունքների անկախություն, կյանքի բոլոր իրադրություններով ապրելու ձգտում: Հեղինակն անում է այսպիսի եզրահանգում՝ ռիսկային վարքը դեռահասի գլխավոր արժեքն է ոչ միայն նրանց տարիքի սպեցիֆիկության պատճառով, այլ նաև նրա համար, որ դա ժամանակակից հասարակության արժեքներից է: Մարդիկ հակում ունեն դրսևորվելու միջոցներով, որոնք հավասարակշռում են հակառակ կողմերի արժեքները[13]:

Ակնհայտ է, որ կոնստրուկտիվ ռիսկային վարքի մեջ առավել հաջող են ներառված երկու այլընտրանք՝ ա) ռիսկը որպես գործողություն ուղղված հանդեպ գրավիչ նպատակը, որին հասնելը կապված է վտանգի տարրերի, կորցնելու վտանգի, անհաջողության հետ և բ) ռիսկը որպես միջոց վարքի ճկունության, ստեղծագործական պոտենցիալի զարգացման, ինքնորոշման և ինքնահաստատման ձևավորման համար:

Ժամանակակից անհատի կենսագործունեության բոլոր ոլորտներում անընդհատ կատարվող փոփոխությունների պայմաններում, երբ մարդը մշտապես հայտնվում է անորոշ դրության մեջ, ադապտացիայի սովորական մեխանիզմների բացակայության դեպքում, մեծանում է ռիսկի արժեքը: Հատուկ ուշադրության է արժանանում դեռահասության տարիքը: Բ.Գ. Մեշչերյակովը և Վ.Պ. Զինչենկոն *ադապտացիա* հասկացությունը բնութագրում են որպես հարմարանք արտաքին և ներքին փոփոխվող պայմանների նկատմամբ [6]: Այս կոնստեքստում պետք է հատուկ ուշադրություն դարձնել “հարմարանք” և “փոփոխվող” բառերի վրա: Հարց է առաջանում՝ արդյոք հնարավոր է հարմարվել անընդհատ փոփոխվող պայմաններին: Գործնականում հնարավոր չէ, քանի որ նախորդ դրության հարմարանքները դադարում են ադեկվատ լինել ամենաչնչին փոփոխությանը:

Մինչ այժմ հետազոտությունների մեծ մասում շեշտադրված էր ռիսկային վարքի դեստրուկտիվ ազդեցությունը լիարժեք կյանքի և առողջության պահպանման հարցերում: Սակայն ռիսկային վարքը

կարելի է ներկայացնել կառուցողական՝ կոնստրուկտիվ ֆենոմենի, հոգեբանական բնութագրի, դեռահասության տարիքի պոտենցիալի տեսքով: Այս տեսանկյունից ռիսկային վարքը դա գործոն է, որը ապահովում է դեռահասի ադապտացիան աշխարհում, լիարժեք կյանքում, որի պայմաններում նրանք ինքնուրույն որոշում են թույլատրելի ռիսկի աստիճանը և այն իրականացնելով կրում են պատասխանատվություն իրենց ընտրության արդյունքների համար: Ըստ S.Lyng-ի ռիսկային վարքագիծը դա դեռահասի սպոնտան գործունեությունն է սեփական կարողությունների փորձարկման համար, փորձ, որի միջով անցնում է անհատը ինքն իրեն գտնելու համար [11]: Լրացնելով և զարգացնելով S.Lyng-ի մտքերը C.E. Irwin-ը ռիսկային վարքագիծը դիտում է որպես անհատի սոցիալիզացիայի պրոցեսի անբաժանելի մաս [9]:

Հաշվի առնելով, որ սոցիալիզացիան դա անհատի կողմից սոցիալական փորձի ընկալման պրոցեսն է, սոցիալական կապերի և հարաբերությունների համակարգը, նպատակահարմար է ռիսկային վարքի ֆենոմենի մասին խոսել որպես սոցիալական ադապտացիայի անբաժանելի բնութագրիչ, որը ենթադրում է անհատի ակտիվ հարմարվելը սոցիալական միջավայրի պայմաններին:

Ըստ ռեդուկցիոն տեսության բոլոր անհատական պրոցեսները՝ սեռական հարաբերությունից մինչև հումորի զգացում՝ կատարվում են անհատի կողմից լարվածությունը մեղմացնելու համար: Մոտիվացիայի այսպես կոչված ռեդուկցիոն մոդելը, ենթադրում է, որ անհատի ֆիզիոլոգիական՝ բիոգեն պահանջները ստեղծում են լարվածություն և դա էլ ստիպում է նրան փնտրել լիցքաթափման եղանակներ այդ պահանջների բավարարման ճանապարհով: Մի շարք կենսական հիմնական պահանջներ՝ ծառավի, ուտելու, քնելու, սեռական հարաբերության պահանջների բավարարումը բացատրվում է ռեդուկցիոն տեսությամբ: Ի հակադրություն այս տեսության մյուսները հիմնական շեշտը դնում են մարդու շրջապատին տիրելու ձգտման և նոր փորձի ձեռք բերմանը բավարարվածության նպատակով [8]:

Իհարկե, մենք չենք սահմանափակվում ոչ ռեդուկցիոն, ոչ կոմպլետենտության մոդելներով: Մասլոուն գտնում է, որ ինչ որ պահեր անհատին մոտիվացնում են պահանջի դեֆիցիտը և այդ դեպքում նա ձգտում է մեղմացնել լարվածությունը, մեկ այլ ժամանակ նրան իրենց հետևից տանում են աճող պահանջները, իսկ այդ ժամանակ նա ձգտում է ուժեղացնել լարվածությունը և որպես միջոց դրանից օգտվելով իրականացնել անհատական պոտենցիալը:

Դեռահասների վերարտադրողական առողջության վիճակը կարելի է դիտել որպես խիստ զգայուն, յուրօրինակ ինդիկատոր արտա-

քին և ներքին միջավայրերի փոփոխվող գործոնների նկատմամբ [1,2,7]:

Դեռահասների սոցիալական և հոգեբանական դեզադապտացիան պատճառ են դառնում վաղ սեռական հարաբերությունների, ռիսկային սեռական վարքագծի դրսևորման: Սեռական զուգընկերների հաճախակի փոփոխությունը, առանց հակաբեղմնավորիչների սեռական հարաբերությունը սեռավարակների և փոքր կոնքի օրգանների բորբոքային հիվանդությունների, անցանկալի հղիությունների պատճառ են դառնում, ինչը հաճախ ավարտվում է աբորտով կամ վաղ մայրությամբ: Վերարտադրողական համակարգի բազմաթիվ օրգանական և ֆունկցիոնալ հիվանդություններ սկսվում են հենց դեռահասության տարիքում և բացասաբար են անդրադառնում ապագա հղիությունների ընթացքի, սերնդի առողջության, հայրության հնարավորության վրա [10]: Անկասկած, վաղ սեռական ռիսկային վարք դրսևորող դեռահասները լրացնում են սեռական ճանապարհով փոխանցվող բորբոքային հիվանդությունների ռիսկային խումբը, ինչն էլ բերում է վերարտադրողական համակարգի ախտաբանական խանգարումների հավանականության մեծացման: Համաձայն գրականության տվյալների, կենսաբանական հասունացումը այժմ ավելի վաղ է կատարվում, քան նախորդ սերնդի մոտ, սակայն դրանից ետ է մնում հոգեբանական և սոցիալական հասունացումը [4]:

Այսինքն, դեռահասի ռիսկային վարքագիծը անդրադառնում է նրա վերարտադրողական առողջության վրա և, հասկանալի է, այս դեպքում խոսել վարքագծի փոփոխության մասին համոզիչ չի կարող լինել: Դեռահասի սոցիալիզացիայի պրոցեսի ընթացքում ռիսկային գործողությունների պատճառով շատ արգելքներ են առաջանում: Սակայն ակնհայտ է, որ նպատակահարմար չէ ուղղորդվել “որքան դեռահասի վարքագիծը պակաս ռիսկային է, այնքան ավելի հեշտ է կատարվում սոցիալիզացիան” դրույթով, ի նկատի ունենալով, որ ռիսկային վարքագիծը նախ և առաջ դեռահասության տարիքի հոգեբանական բնութագիրն է: Այս պատճառով փոխարեն դեռահասներին մեղադրել իրենց անկանխատեսելի և թերևամիտ արարքների համար, ավելի ճիշտ կլինեք նրանց սեռական դաստիարակության միջոցով սովորեցնել թույլատրելի ռիսկի չափը:

Վերը նշվածից անում ենք եզրակացություն՝ դեռահասության տարիքում ռիսկային վարքի ֆենոմենի նկատմամբ միակողմանի բացասական վերաբերմունքը և նպատակային նրան մեկ այլ ֆենոմենով փոխարինելը չեն տա նկատելի արդյունքներ: Նպատակահարմար է այս ֆենոմենի գնահատականը տալ համեմատելով նրա դրական և բացասական կողմերը: Դրության մեջ, երբ դեռահասի ռիսկային վար-

քաղիծը հոմանիշ է “անվտանգ վարքագիծ” հասկացությանը, այն համարվում է դեռահասության տարիքի տարիքային նորմ, որին ցանկալի է վերաբերվել դրական: Այս տեսանկյունից ռիսկային վարքը բերում է դեռահասի ադապտացիայի, նոր սոցիալական դերի վարքի ճկունության միջոցով, ստեղծագործական պոտենցիալի զարգացման, անհատականության ձևավորման, իքնահաստատման: Դրության մեջ, երբ դեռահասի ռիսկային վարքագիծը հոմանիշ է *առատողեստրուկտիվ վարքագիծ* հասկացությանը, պետք է մեղմացնել նրա նեգատիվ ազդեցությունների տենդենցը ոչ միայն դեռահասին ինֆորմացնելով թույլատրելի ռիսկի չափի մասին, այլև մոտիվացիայի ճանապարհով հասնել ինքնատիրապետման և իրականացրած վարքի հետևանքների համար պատասխանատվության: Ռիսկային վարքի ֆենոմենի նկատմամբ ռացիոնալ մոտեցումը կնպաստի դեռահասի ճկուն ադապտացիային: Կարծում եմ, որ սեռական վարքի ռիսկերի ճիշտ կոորդինացիայի կարելի է հասնել սեռական դաստիարակության միջոցով:

Поступила 26.01.12

Особенности оценки рискованного поведения подростков в процессе социализации

Г.Р. Саргсян, А.К. Айрапетян

Социальная и психологическая дезадаптация подростков становится причиной ранних половых отношений, рискованного полового поведения, что и отражается на их репродуктивном здоровье. Имея в виду, что рискованное поведение в первую очередь является психологической характеристикой подросткового возраста, очевидно, что нецелесообразно руководствоваться принципом “чем менее рисковано поведение подростка, тем легче происходит его социализация”. Рациональное отношение к феномену рискованного поведения приведет к гибкой адаптации подростка. Считаем, что путем полового воспитания можно достигнуть правильной координации рисков полового поведения.

Characteristics of risky behavior assessment in the process of adolescents' socialization

G.R. Sargsyan, A.K. Hayrapetyan

Adolescents' social and psychological desadaptation causes early sexual relations, risky sexual behavior demonstrations, which affect their reproductive health. However, it is clear that it is not advisable to be guided with the provision "the less risky is adolescent's behavior, the easier is his socialization", taking into consideration that first of all risky behavior is a psychological characteristics of adolescent age. The rational approach to risky behavior phenomenon will lead to adolescents' flexible adaptation. We suppose that sexual behavior risks' proper coordination can be achieved by sexual education.

Գրականություն

1. *Айламазян Э.К.* Репродуктивное здоровье женщины как критерий биоэкологической оценки окружающей среды. Вестн. Рос. ассоц. акушеров-гинекологов, 1997, 3, с. 72-78.
2. *Анохина И.П.* Основные биологические механизмы зависимости от психоактивных веществ. Руководство по наркологии. Под ред. Н.Н. Иванца, 2-е изд., М., 2008, с. 71-79.
3. *Бек У.* От индустриального общества к обществу риска. Альманах THESIS. Неопределенность. Случайность, 1994, 5, с.161-184.
4. *Буркин М.М., Теревников В.А., Шевцова О.В., Ананьева Н.Ю.* Детская безнадзорность и проституция. Мат. конгр. по детской психиатрии, М., 2001, с.170-171.
5. *Головин С.Ю., Харвест М.* Словарь практического психолога. 2001, с.418
6. *Зинченко В.П., Мещерякова Б.Г.* Большой психологический словарь. М., 2003.
7. *Коколина В.Ф.* Детская гинекология. Руководство для врачей, М., 2001.
8. *Хьелл Л., Зиглер Д.* Теории личности. <http://psylib.org.ua/books/holi01>. 09.08.2010
9. *Irwin C.E.* Adolescence and risk taking: how are they related. Adolescent Risk Taking. 1993, p. 7-28.
10. *Kirby D., Coyle K., Gould J.B.* Fam. Plann. Perspect., 2001; 33: 2: 63-72.
11. *Lyng S., Edgeworth* The sociology of Risk-Taking. Taylor&Francis, New York, 2004.
12. Riskovannoe-povedenie. <http://evanmed.ru/.08.26.2009>.
13. *Schwartz, Shalom H.* Basic Human Values. An Overview, RISORSA UOMO, 2007, 2, p.3-23.

УДК 613.1-036.22(479.25):614.2

Կլիմայական փոփոխությունների հիգիենիկ առանձնահատկությունները և նրանց ազդեցությունը բնակչության առողջության վրա

**Լ.Ռ. Ավետիսյան, Ա.Հ. Քոթանյան, Ս.Հ. Մկրտչյան,
Հ.Ա. Մելքոնյան**

*Մ.Հերացու անվան ԵՊԲՀ հիգիենայի և էկոլոգիայի ամբիոն,
Հայաստանի հիդրոոդերևութաբանության և
մոնիտորինգի պետական ծառայություն
0025 Երևան, Կորյունի փ., 2*

Բանալի բառեր. կլիմայական փոփոխություններ, ջերմային ալիքներ, սեզոնայնություն, հիվանդացություն, մահացություն

